ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/118/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 01 դեկտեմբերի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Նարեկ Համբարձումյանի, Մարիամ Գալստյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2022 թվականի դեկտեմբերի 01-ին քննելով ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Հայկ Հերբերտի Գևորգյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «2021 թվականի պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» հայտարարագրում ոչ ամբողջական և սխալ ներկայացնելու փաստերի առթիվ 2022 թվականի նոյեմբերի 15-ի N ՎԻՎ 118/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը՝

ՊԱՐԶԵՑ

I.Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հետք» լրատվամիջոցի լրագրող Վահե Սարուխանյանի հրապարակումը[1] և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, իրականացրել է ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Հայկ Հերբերտի Գևորգյանի կողմից 2021

[1] https://hetq.am/hy/article/143813

թվականի դեկտեմբերի 3-ին ներկայացված «2021 թվականի պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) վերլուծություն, որի արդյունքում պարզել է.

1) Ճանապարհային ոստիկանությունից 18.05.2022 թվականի թիվ 7-7 գրությանը կից ստացված տեղեկատվության, ինչպես նաև Հայկ Հերբերտի Գևորգյանի գրավոր պարզաբանումներին կից ներկայացված ՃՈ 13.07.2022 թվականի թիվ 14/17/61745-22 գրությամբ ստացված տվյալների համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանի (հասցե՝ ք. Երևան, ..., անձնագիր՝ ') անվամբ՝

- 16.07.2018թ.-ից մինչ օրս գրանցված և հաշվառված է «MITSUBISHI PAJERO IO 1.8» մակնիշի, հաշվառման համարանիշի, , նույնականացման համարով ավտոմոբիլը:
- 21.04.2021թ.-ից մինչ օրս գրանցված և հաշվառված է «NISSAN X -TERRA 4.0» մակնիշի, հաշվառման համարանիշի, . նույնականացման համարով ավտոմոբիլը:

Մինչդեռ, Հայտարարագրի «Բ.2. Տրանսպորտի միջոցները» բաժնում հայտարարագրվել է մեկ տրանսպորտային միջոց՝ ***MITSUBISHI PAJERO IO 1.8,*** թողարկման տարին՝ 1999թ., նույնականացման համարը՝ , տրանսպորտի միջոցի ձեռք բերելու օրը, ամիսը, տարին՝ ***2018թ.***:

2) ՀՀ Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանը հաշվետու ժամանակահատվածում հանդիսացել է ***ք. Երևան,*** . - . - . . ***բնակարանի*** (անշարժ գույքի հաշվառման համարը՝) ***համասեփականատեր***, որը չի ներկայացվել Հայտարարագրի ***«Բ.1. Անշարժ գույք» ենթաբաժնում:***

3) Իրավաբանական անձանց պետական ռեգիստրից ստացված տեղեկատվության համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանն ունի ***20% մասնակցություն «Դարեսկիզբ» ՍՊԸ-ում:*** Հայտարարագրի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի *«Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում»* ենթաբաժնում ներկայացվել է «Դարեսկիզբ» ՍՊԸ-ում (ՀՎՀՀ՝ , Հայկ Հերբերտի Գևորգյանի 20%

մասնակցությունը, սակայն ***Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» ենթաբաժնում*** հայտարարագրման ենթակա տվյալը ***չի ներկայացվել:***

4) Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանը հանդիսանում է «Լրագրողների անկախ» արհեստակցական կազմակերպության (***ՀՎՀՀ՝ ( )*** հիմնադիր և խորհրդի անդամ: Սակայն Հայտարարագրի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի ***«Ե.4. Հայտարարատուի անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» ենթաբաժնում*** նշված տվյալը չի ներկայացվել:

5) Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանն ունի ***20% մասնակցություն «ՆԻԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ում (ՀՎՀՀ՝):*** Սակայն Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում, ինչպես նաև «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի ***«Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում*** նշված տվյալները չեն ներկայացվել:

6) Հայտարարագրի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի ***«Ե.3. Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» ենթաբաժնում «Դարեսկիզբ» ՍՊԸ-ում և «ՆԻԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ում*** Հայկ Հերբերտի Գևորգյանի ունեցած 20% մասնակցությունները ***հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ*** տվյալներ չեն ներկայացվել:

1.2 Հանձնաժողովը 2022 թվականի նոյեմբերի 03-ին Հայկ Գևորգյանին է հասցեագրել թիվ 01/2674-2022 ծանուցումը՝ Հայտարարագրում հայտնաբերված վերոշարադրյալ անհամապատասխանությունների վերաբերյալ՝ հրավիրելով 2022 թվականի նոյեմբերի 15-ին վերջինիս մասնակցությամբ կազմելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:

1.3 2022 թվականի նոյեմբերի 15-ին Հայկ Գևորգյանի մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 130/22 արձանագրությունը՝

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտումների հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՎԻՎ 118/22 որոշմամբ վերոնշյալ առերևույթ խախտումների հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին ՎԻՎ 118/22 որոշումը՝ վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին նշումով, համապատասխան ուղեկցող գրությամբ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել է Հայկ Գևորգյանին:

1.5 Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի դեկտեմբերի 01-ին ժամը 11:00-ին, ինչի կապակցությամբ Հայկ Գևորգյանը պատշաճ ծանուցվել է: Հայկ Գևորգյանը մինչև գործի քննությունը Հանձնաժողով ներկայացրած գրությամբ հայտնել է, որ աշխատանքի հետ առնչվող անկանխատեսելի պատճառներով չի կարողանա մասնակցել գործի քննությանը և չի առարկել, որպեսզի գործը քննվի իր բացակայությամբ:

Գործը քննվել է Հայկ Գևորգյանի բացակայությամբ, գործի քննությունը հետաձգելու միջնորդություն չի ներկայացվել:

II. Վարույթի մասնակցի բացատրությունը

Հայկ Գևորգյանը Հանձնաժողով ներկայացրած գրավոր պարզաբանումներով հայտնել է հետևյալը (մեջբերում).

«1. Ք. Երևան, բնակարանը ձեռք է բերվել հիփոթեքային վարկի միջոցով՝ որդուս՝ կողմից: Վարկառու-գնորդը որդիս է՝ [illegible] հանդիսանում ենք համավարկառուներ: Այն, որ ես համավարկառու եմ և համասեփականատեր, պարզել եմ Ձեր կողմից ինձ ուղղված N01/1324-2022 գրությանը պատասխանելու համար անհրաժեշտ փաստաթղթերը հավաքագրելու ընթացքում: Խնդիրն այն է, որ 2019թ. նշված հիփոթեքային վարկը ստանալու ժամանակ ես համարել եմ, որ ընդամենը որդուս հետ պատասխանատվություն եմ ստանձնում և հանդիսանում եմ իր վերցրած վարկի երաշխավորը: Նշեմ, որ որդուս կողմից այդ վարկը վերցնելու գործընթացին

մասնակցել եմ խիստ էպիզոդիկ՝ 1-2 անգամ բանկ այցելելով և պահանջված փաստաթղթերը ստորագրելով՝ առանց խորամուխ լինելու բովանդակության մեջ, քանի որ այդ գործով զբաղվում էին որդիս և իր կինը, որոնց վստահում եմ անվերապահորեն: Պատահական չէ, որ օրեր առաջ իմ հարցմանն ի պատասխան՝ Հայէկոնոմբանկը ինձ տրամադրել է տեղեկանք, որում վերոնշյալ վարկի մասին որևէ տեղեկություն չկա (տեղեկանք 14.1-37/207, տրվ. 13/07/2022թ.): Ճիշտ նույն իրավիճակը եղել է նաև հայտարարագիրը լրացնելիս, երբ բանկը, իմ հարցմանն ի պատասխան, նորից չէր տրամադրել նշված հիփոթեքային վարկի մասին տեղեկություն: Եվ սա այն ժամանակ էլ հաստատել էր իմ այն համոզմունքը, որ վարկը իմ կողմից չի ձեռք բերվել, հետևաբար նաև բնակարանի նկատմամբ սեփականության որևէ իրավունք չունեմ: Սակայն մի քանի օր առաջ որդուցս խնդրել եմ վերը նշված գույքի սեփականության վկայականի պատճենը և պարզել, որ համարվում եմ այդ բնակարանի 4 համասեփականատերերից մեկը: Այնուհետև կրկին դիմել եմ Հայէկոնոմբանկին՝ խնդրելով ինձ տրամադրել ամբողջական տեղեկություններ իմ վարկերի մասին, այդ թվում՝ որպես համավարկառու: Միայն կրկնակի դիմելուց հետո բանկից ստացել եմ հիփոթեքային այդ վարկի մասին տեղեկություն պարունակող երկրորդ տեղեկանքը (տեղեկանք 14.1-37/209, տրվ. 15/07/2022թ.):

Այսպիսով, բնակարանը ձեռք է բերվել հիփոթեքային վարկի միջոցով և հայտարարագրում չի նշվել զուտ թյուրիմացության հետեւանքով:

2. NISSAN X-TERRA 4.0 մակնիշի 2007թ. արտադրության տրանսպորտային միջոցը (նույնականացման համարը), չի նշվել 2021թ. պաշտոնը դադարեցնելու իմ հայտարարագրում՝ միայն իմ և օգնականիս միջև տվյալների փոխանցման ընթացքում առաջացած շփոթմունքի և անուշադրության հետևանքով, ինչպես նաև հայտարարագրման համակարգի տեխնիկական խնդիրների պատճառով (եղել են իրավիճակներ, որ բազմաթիվ անգամներ հայտարարագրման առցանց համակարգը չի ընդունել կամ չենք կարողացել մուտքագրել): Հայտարարագրում լրացվել են այդ պահին ինձ պատկանող երկու տրանսպորտային միջոցների՝ MITSUBISHI PAJERO IO 1.8 մակնիշի 1999թ. արտադրության ավտոմոբիլի և NISSAN X-TERRA 4.0 մակնիշի, 2007թ. արտադրության ավտոմոբիլի տվյալները՝ միախառնված: Պատճառը միայն անուշադրությունն է և

հայտարարագրման առցանց համակարգի տեխնիկական բարդությունները: NISSAN X-TERRA 4.0 մակնիշի 2007թ. արտադրության տրանսպորտային միջոցը (նույնականացման համարը , իմ կողմից ձեռք է բերվել 21.04.2021թ. և մինչ օրս, այդ թվում՝ պաշտոնը դադարեցնելու դրությամբ, հաշվառված է իմ անունով: Կից ներկայացնում եմ այս տվյալները փաստող ՃՈ տեղեկանքը:

3. Ինձ պատկանող MITSUBISHI PAJERO IO 1.8 մակնիշի ավտոմոբիլի նույնականացման համարների առնչությամբ տեղի է ունեցել շփոթմունք: 2020թ. և 2021թ. հայտարարագրերում նույնականացման համարի փոխարեն սխալմամբ նշվել է ինձ պատկանող NISSAN X-TERRA 4.0 մակնիշի 2007թ. արտադրության ավտոմոբիլի նույականացման համարը՝ (ավտոմոբիլն արդեն հաշվառված էր իմ անունով երկու հայտարարագրերը ներկայացնելու դրությամբ՝ 29.05.2021թ. եւ 13.12.2021թ.): Պատճառը, ամենայն հավանականությամբ, ինչպես նշել եմ վերևում, իմ և օգնականիս միջև տվյալների փոխանցման ընթացքում առաջացած շփոթմունքն է և հայտարարագրման առցանց համակարգի հետ աշխատելու բարդությունները:

MITSUBISHI PAJERO IO 1.8 մակնիշի տրանսպորտային միջոցը պաշտոնը դադարեցնելու դրությամբ հաշվառված է եղել իմ անունով: Կից ներկայացնում եմ այս տվյալները փաստող ՃՈ տեղեկանքը:

Այս գրության հետ էլեկտրոնային փոստով ուղարկում եմ բոլոր վերը նշված փաստաթղթերը: Անհրաժեշտության դեպքում բոլորը առձեռն կարող եմ բերել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ չնայած իմ ներկայացրած պարզաբանումներին, որոնք, կարծում եմ, փաստում են որևէ դիտավորության բացակայությունը, ***հայտարարագիրը կազմելիս չեմ ցուցաբերել անհրաժեշտ ուշադրություն, ինչը չունի ոչ մի արդարացում: Համարում եմ, որ նման գործելակերպը անթույլատրելի է:»:***

Միաժամանակ, 2022 թվականի նոյեմբերի 15-ին վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 130/22 արձանագրության կազմանը մասնակցած Հայկ Գևորգյանի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ որևէ առարկություն չի ներկայացվել:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/118/22 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում՝

3.1 Ճանապարհային ոստիկանությունից 18.05.2022 թվականի թիվ 7-7 գրությանը կից ստացված տեղեկատվության, ինչպես նաև Հայկ Հերբերտի Գևորգյանի գրավոր պարզաբանումներին կից ներկայացված ՃՈ 13.07.2022 թվականի թիվ 14/17/61745-22 գրությամբ ստացված տվյալների համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանի (հասցե՝ ք. Երևան, , անձնագիր՝ , անվամբ՝

- 16.07.2018թ.-ից մինչ օրս գրանցված և հաշվառված է «MITSUBISHI PAJERO IO 1.8» մակնիշի, հաշվառման համարանիշի, նույնականացման համարով ավտոմոբիլը:
- 21.04.2021թ.-ից մինչ օրս գրանցված և հաշվառված է «NISSAN X -TERRA 4.0» մակնիշի, հաշվառման համարանիշի, նույնականացման համարով ավտոմոբիլը:

Մինչդեռ, Հայտարարագրի «Բ.2. Տրանսպորտի միջոցները» բաժնում հայտարարագրվել է մեկ տրանսպորտային միջոց՝ MITSUBISHI PAJERO IO 1.8, թողարկման տարին՝ 1999թ., նույնականացման համարը՝ , տրանսպորտի միջոցի ձեռք բերելու օրը, ամիսը, տարին՝ ***2018թ.***:

Հետևաբար, Հայտարարագրում առկա է *սխալ և ոչ ամբողջական ներկայացված տվյալ:*

3.2 ՀՀ Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանը հաշվետու ժամանակահատվածում հանդիսացել է ***ք. Երևան,*** ***բնակարանի*** (անշարժ գույքի հաշվառման համարը՝ ***համասեփականատեր***, որը չի ներկայացվել Հայտարարագրի ***«Բ.1. Անշարժ գույք» ենթաբաժնում:***

Հետևաբար, Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ:*

3.3 Իրավաբանական անձանց պետական ռեգիստրից ստացված տեղեկատվության համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանն ունի ***20% մասնակցություն «Դարեսկիզբ» ՍՊԸ-***

ում: Հայտարարագրի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում ներկայացվել է «Դարեսկիզբ» ՍՊԸ-ում (ՀՎՀՀ՝) Հայկ Հերբերտի Գևորգյանի 20% մասնակցությունը, սակայն ***Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» ենթաբաժնում*** հայտարարագրման ենթակա տվյալը ***չի ներկայացվել:***

Հետևաբար, Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ:*

3.4 Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանը հանդիսանում է «Լրագրողների անկախ» արհեստակցական կազմակերպության (***ՀՎՀՀ՝*** հիմնադիր և խորհրդի անդամ: Սակայն Հայտարարագրի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի ***«Ե.4. Հայտարարատուի անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» ենթաբաժնում*** նշված տվյալը չի ներկայացվել:

Հետևաբար, Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ:*

3.5 Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանն ունի ***20% մասնակցություն «ՆԻԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ում (ՀՎՀՀ՝):*** Սակայն Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում, ինչպես նաև «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի ***«Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում*** նշված տվյալները չեն ներկայացվել:

Հետևաբար, Հայտարարագրում առկա են *ոչ ամբողջական ներկայացված տվյալներ:*

3.6 Հայտարարագրի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի ***«Ե.3. Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» ենթաբաժնում «Դարեսկիզբ» ՍՊԸ-ում և «ՆԻԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ում*** Հայկ Հերբերտի Գևորգյանի ունեցած 20% մասնակցությունները ***հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ*** տվյալներ չեն ներկայացվել:

Հետևաբար, Հայտարարագրում առկա են *ոչ ամբողջական ներկայացված տվյալներ:*

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Հայկ Հերբերտի Գևորգյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ ***անշարժ գույքը***՝ հողամասը, (...) ստորգետնյա և վերգետնյա շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույք, ***տրանսպորտի միջոցը***՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը (...), ***բաժնային արժեթղթերը,*** այլ ներդրումը հավաստող փաստաթղթերը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը) (...):

4.3 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են՝

1) ***անշարժ գույքի*** դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու սեփականատիրոջ բաժինը, համասեփականատիրոջ բաժինը, նրա անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը և նրանց միջև առկա կապի բնույթը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը.

2) ***տրանսպորտի միջոցի*** դեպքում՝ տրանսպորտի տեսակը, մակնիշը, սերիան, թողարկման տարին, նույնականացման համարը, ձեռք բերելու տարին և եղանակը.

3) ***արժեթղթի*** և (կամ) այլ ներդրման դեպքում՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման տեսակը, գինը (արժեքը), արժույթը, ձեռք բերելու տարին, ընկերության անվանումը, բաժնեմասնակցության տոկոսը, ումից է այն ձեռք բերվել՝ նշելով նրա անվանումը կամ անունը, ազգանունը և հայրանունը, հասցեն, նրանց միջև առկա կապի բնույթը.

4.4 Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրի՝ ***«Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում*** նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում

մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը ***և (կամ) նրա ընտանիքի անդամները***, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

4.5 Օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ ***«Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում*** նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որում հայտարարատու պաշտոնատար անձի ունեցած բաժնեմասը հանձնված է հավատարմագրային կառավարման, կամ հավատարմագրային կառավարչի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, պայմանագրի գործողության ժամկետը:

4.6 Օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտարարագրի՝ ***«Անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում*** նշվում են ոչ առևտրային կազմակերպության անվանումը, որին հայտարարատու պաշտոնատար անձն անդամակցում է կամ ներկայացված է դրա կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, կազմակերպությունում անձի կարգավիճակը:

4.7 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել է հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակել այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում (2021 թվականի ապրիլի 9-ի թիվ ՎԻՎ/02/21 և 2021 թվականի մարտի 18-ի թիվ ՎԻՎ/01/21 որոշումներ):

Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ Օրենքով պահանջվող ***հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:***

Սույն գործով Հայկ Գևորգյանը «2021 թվականի պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» հայտարարագրում ***անզգուշությամբ*** ներկայացրել է հետևյալ սխալ և ոչ ամբողջական տվյալները.

1) Ճանապարհային ոստիկանությունից 18.05.2022 թվականի թիվ 7-7 գրությանը կից ստացված տեղեկատվության, ինչպես նաև Հայկ Հերբերտի Գևորգյանի գրավոր պարզաբանումներին կից ներկայացված ՃՈ 13.07.2022 թվականի թիվ 14/17/61745-22 գրությամբ ստացված տվյալների համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանի (հասցե՝ ք. Երևան, --- ,, ... , անձնագիր՝ ') անվամբ՝

- 16.07.2018թ.-ից մինչ օրս գրանցված և հաշվառված է «MITSUBISHI PAJERO IO 1.8» մակնիշի, հաշվառման համարանիշի, նույնականացման համարով ավտոմոբիլը:

- 21.04.2021թ.-ից մինչ օրս գրանցված և հաշվառված է «NISSAN X -TERRA 4.0» մակնիշի, հաշվառման համարանիշի, նույնականացման համարով ավտոմոբիլը:

Մինչդեռ, Հայտարարագրի «Բ.2. Տրանսպորտի միջոցները» բաժնում հայտարարագրվել է մեկ տրանսպորտային միջոց՝ MITSUBISHI PAJERO IO 1.8, թողարկման տարին՝ 1999թ., նույնականացման համարը՝ տրանսպորտի միջոցի ձեռք բերելու օրը, ամիսը, տարին՝ 2018թ.: Նշված արարքով Հայկ Գևորգյանը խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջները: Հետևաբար, Հայտարարագրում առկա է սխալ և ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

2) ՀՀ Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանը հաշվետու ժամանակահատվածում հանդիսացել է ***ք. Երևան, բնակարանի*** (անշարժ գույքի հաշվառման համարը՝ ***համասեփականատեր***, որը չի ներկայացվել Հայտարարագրի ***«Բ.1. Անշարժ գույք» ենթաբաժնում:*** Նշված արարքով Հայկ Գևորգյանը խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջները: Հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

3) Իրավաբանական անձանց պետական ռեգիստրից ստացված տեղեկատվության համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանն ունի ***20% մասնակցություն «Դարեսկիզբ» ՍՊԸ-ում:*** Հայտարարագրի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում ներկայացվել է «Դարեսկիզբ» ՍՊԸ-ում (ՀՎՀՀ՝) Հայկ Հերբերտի Գևորգյանի 20% մասնակցությունը, սակայն ***Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» ենթաբաժնում*** հայտարարագրման ենթակա տվյալը ***չի ներկայացվել:*** Նշված արարքով Հայկ Գևորգյանը խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և նույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի պահանջը: Հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ խախտումը տվյալ դեպքում դրսևորվել է «Դարեսկիզբ» ՍՊԸ-ում բաժնեմասնակցությունը Հայտարարագրի՝ ***«Բ.3.***

Արժեթղթեր և այլ ներդրումներ» ենթաբաժնում չներկայացնելու մեջ: Նշված տվյալները Օրենքով սահմանված առանձին հայտարարագրման ենթակա տվյալներ են և չեն վերաբերվում հայտարարագրման ենթակա տվյալը սխալ ենթաբաժնում լրացվելուն:

4) Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանը հանդիսանում է «Լրագրողների անկախ» արհեստակցական կազմակերպության (***ՀՎՀՀ՝ ***) հիմնադիր և խորհրդի անդամ: Սակայն Հայտարարագրի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի ***«Ե.4. Հայտարարատուի անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» ենթաբաժնում*** նշված տվյալը չի ներկայացվել: Նշված արարքով Հայկ Գևորգյանը խախտել է Օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը: Հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

5) Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ Հայկ Հերբերտի Գևորգյանն ունի ***20% մասնակցություն «ՆԻԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ում (ՀՎՀՀ՝):*** Սակայն Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում, ինչպես նաև «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի ***«Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում*** նշված տվյալները չեն ներկայացվել: Նշված արարքով Հայկ Գևորգյանը խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, նույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, ինչպես նաև 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալներ:

6) Հայտարարագրի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի ***«Ե.3. Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» ենթաբաժնում «Դարեսկիզբ» ՍՊԸ-ում և «ՆԻԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ում*** Հայկ Հերբերտի Գևորգյանի ունեցած 20% մասնակցությունները ***հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ*** տվյալներ չեն ներկայացվել: Նշված արարքով Հայկ Գևորգյանը խախտել է Օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Հետևաբար, Հայտարարագրում առկա են ոչ ամբողջական ներկայացված տվյալներ:

Հաշվի առնելով արձանագրված խախտումների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները, սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Հայկ Գևորգյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ և ոչ ամբողջական տվյալներ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքներ:

Հայտարարագրի «Բ.2. Տրանսպորտի միջոցները» բաժնում երկու տրանսպորտային միջոցի փոխարեն թվով մեկ տրանսպորտային միջոցը սխալ նույնականացման տվյալներով և ձեռք բերելու ամսաթվով ներկայացնելու, ինչպես նաև Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույք» ենթաբաժնում ք. Երևան,

բնակարանը չհայտարարագրելու կապակցությամբ Հայկ Գևորգյանն իր կողմից ներկայացված գրավոր պարզաբանմամբ ընդունել է որևէ դիտավորության բացակայությունը՝ նշելով, որ *հայտարարագիրը լրացնելիս չի ցուցաբերել անհրաժեշտ ուշադրություն, ինչը չունի ոչ մի արդարացում, համարելով, որ նման գործելակերպն անթույլատրելի է*:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Հանձնաժողովն իր կողմից կայացված նախորդ որոշումներով շահերի հայտարարագրում ոչ ամբողջական տվյալների հայտարարագրման հետ կապված՝ նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ պաշտոնատար անձի հայտարարագրի Դ.1. «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում հայտարարատուի մասնակցությունը առևտրային կազմակերպությունում չի ներկայացվել, սակայն գործում առկա փաստերի համաձայն (օրինակ, Պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալներ) հաստատվել է, որ առևտրային կազմակերպության գործունեությունը

ժամանակավոր դադարեցված է, (ՎԻՎ 05/22, ՎԻՎ 22/22): Հանձնաժողովը գտել է, որ կազմակերպության գործունեությունը ժամանակավոր դադարեցված լինելու հանգամանքով պայմանավորված՝ արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Մեկ այլ գործով Հանձնաժողովը նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ ***նույն հայտարարագրի*** «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացվել է **հայտարարատուի բաժնեմասնակցությունը** առևտրային կազմակերպությանը, սակայն «Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում չի ներկայացվել (ՎԻՎ/27/2022): Այս առումով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացված տվյալները հանդիսանում են այն անհրաժեշտ և համակարգային առումով փոխկապակցված տվյալները, որոնք բավարար են պաշտոնատար անձի հայտարարագրերի պատշաճ վերլուծությունն իրականացնելու համար: Նշվածից բացի, վերոնշյալ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվել է նաև պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվել հանրային հաշվետվողականությունը: Նշվածով պայմանավորված՝ տվյալ խախտումն ունի նվազ նշանկություն, ինչը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 21-րդ հոդվածի ուժով նշված խախտման կապակցությամբ վարչական պատասխանատվությունից ազատելու և բանավոր դիտողություն հայտարարելու հիմք է հանդիսացել:

Սույն գործով առկա փաստական հանգամանքները տարբերվում են վկայակոչված գործերով ներկայացված հանգամանքներից հետևյալ պատճառաբանությամբ.

«Դարեսկիզբ» ՍՊ ընկերության առումով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ նշված առևտրային կազմակերպությունում Հայկ Հերբերտի Գևորգյանի 20% մասնակցությունը Հայտարարագրի ***«Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում*** հայտարարագրված տվյալները (որոնք չեն հայտարարագրվել «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում) չեն հանդիսանում այն անհրաժեշտ և համակարգային առումով փոխկապակցված տվյալները, որոնք բավարար

են պաշտոնատար անձի հայտարարագրերի պատշաճ վերլուծությունն իրականացնելու համար: Տվյալ դեպքում Հայտարարագրի ***«Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում պահանջվող՝*** *բաժնեմասը ումից է ձեռք բերվել (գործարքի մյուս կողմ)՝ նշելով նրա անվանումը կամ անունը, ազգանունը և հայրանունը, հասցեն, նրանց միջև առկա կապի բնույթը* հայտարարագրման ենթակա օրենքով պահանջվող առանձին տվյալներ են: Միաժամանակ, նշված տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրության մասին:

«ՆԻԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ում Հայկ Գևորգյանի ունեցած բաժնեմասնակցության առումով սույն գործով առկա փաստական հանգամանքները տարբերվում են վկայակոչված գործերով ներկայացված հանգամանքներից, քանի որ հայտարարագրման ենթակա տվյալները չեն ներկայացվել ինչպես Հայտարարագրի ***«Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ»*** բաժնում, այնպես էլ «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի ***«Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում***: Նշված տվյալները Օրենքով սահմանված առանձին հայտարարագրման ենթակա տվյալներ են և չեն վերաբերվում հայտարարագրման ենթակա տվյալը սխալ ենթաբաժնում լրացվելուն: Նման պարագայում, Հանձնաժողովի գնահատմամբ, մեծ է շահերի բախման տեսանկյունից հնարավոր ազդեցության ռիսկը, հետևաբար, հայտարարատու պաշտոնատար անձի կողմից ներկայացվող հայտարարագրում շահերի հայտարարագրումն Օրենքի ձևական պահանջ չէ, այլ Օրենքով պահանջվող տվյալ, որի միջոցով ապահովվում է հայտարարատու պաշտոնատար անձի հանրային վերահսկողության տեսանկյունից հանրային հաշվետվողականությունը, շահերի հնարավոր բախման իրավիճակները հսկելու և կանխարգելելու հնարավորությունը: Հայտարարագրման համակարգը նպատակ է հետապնդում հանրային գործիչների և քաղաքացիական ծառայողների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման միջոցով ձևավորել պետական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահություն և բարձրացնել նրանց գործունեության թափանցիկությունը: Այն օժանդակում է հստակեցնել ապօրինի հարստացման կամ այլ անօրինական գործողությունների ամբողջական պատկերը՝ տրամադրելով լրացուցիչ

ապացույցներ, հնարավորություն է տալիս բացառել շահերի բախման իրավիճակները, բացահայտել պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների հնարավոր խախտման դեպքերը և բարձրացնել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների բարեվարքություն աստիճանը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի է առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, այլ առկա է Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք (***հայտարարատուն ընդունել է հայտարարագրման ենթակա տվյալները հայտարարագրում սխալ և ոչ ամբողջական ներկայացնելու արարքում իր անզգուշությունը***):

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «2021 թվականի պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» հայտարարագրում անզգուշությամբ ոչ ամբողջական և սխալ տվյալներ ներկայացնելու համար Հայկի Հերբերտի Գևորգյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայկի Հերբերտի Գևորգյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայկի Հերբերտի Գևորգյանին տրամադրել եռօրյա ժամկետ «2021 թվականի պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժիններում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**